Փարկինգ Սիթի Սերվիս ՓԲԸ

Parking City Service CJSC

PARKING CITY SERVICE

Հասցե՝ ք.Երևան, Բյուզանդի փ. 1/3, հեռ.՝ 060-607-607, էլ. Փոստ՝ info@pcs.am

70/0214-01
14.02.2020թ.

«ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ՝ ԴԱՎԻԹ ՇԱՀԲԱԶՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Շահբազյան

Հայտնում ենք, որ «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի և «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 26.12.2019թ. կնքված N ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2020/3 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն՝ Ընկերությունը պետք է մատուցեր ծրագրային համակարգի սպասարկման ծառայություններ, սակայն ծառայության մատուցումը չի իրականացվել կատարողի կողմից:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետը՝ «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ն 2020 թվականի փետրվարի 14-ից միակողմանի լուծում է վերոնշյալ Պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի 2470103051800000 հաշվեհամարին փոխանցել 14850 (տասնչորս հազար ութ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ որպես տուգանք Պայմանագրի 5.2 կետի համաձայն, տույժ՝ Պայմանագրի 5.3 կետի համաձայն:

Միաժամանակ հայտնում ենք, որ Ընկերությունից կգանձվի նաև պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 297000 (երկու հարյուր իննսունյոթ հազար) ՀՀ դրամի չափով եւ որակավորման ապահովումը՝ 2970000 (երկու միլիոն ինը հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամի չափով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
«ՓԱՐԿԻՆԳ ՍԻԹԻ ՍԵՐՎԻՍ» ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆ՝

ՎԱՉԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ